


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2013թ. դեկտեմբերին


/վերլուծություն/

2013թ. դեկտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 18285 գործարքներ, որոնց քանակը 2013թ. նոյեմբերի համեմատ աճել է 10.8%-ով, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.6%-ով:

2013թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2013թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4612 օտարման գործարքների 76.8%-ը կազմել են առուվաճառքները, 22.6%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.5%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.6%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2013թ. դեկտեմբերին, 2013թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 4.5%-ով, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 3.3%-ով:

2013թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 56.2%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2013թ. դեկտեմբերին, 2013թ. նոյեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.2%-ով, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ՝ 4.6%-ով:

2013թ. դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	դեկտեմբեր 2012թ	դեկտեմբեր 2013թ.	նոյեմբեր 2013թ.
Կենտրոն	421000	428000	428000
Արաբկիր	349500	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	278000	282600	282600
Նոր-Նորք	242850	252000	252000
Ավան	250000	260000	260000
Էրեբունի	242600	250500	250000
Շենգավիթ	248200	256000	255800
Դավթաշեն	268500	275000	275000
Աջափնյակ	239000	249300	249000
Մալաթիա-Սեբաստիա	234100	242000	242000
Նուբարաշեն	145000	154600	154000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. դեկտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ նոյեմբերի համեմատ, աճել են 0.04%-ով:

2013թ. դեկտեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 496 բնակարաններ, որոնց քանակը, 2013թ. նոյեմբերի համեմատ աճել է 16.4%-ով, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ՝ 25.3%-ով:

2013թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2012թ	դեկտեմբեր 2013թ.	նոյեմբեր 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	114000	115200	115000
	Ապարան	53000	57200	57200
	Թալին	61500	64900	64900
Արարատ	Արտաշատ	94200	95250	95000
	Մասիս	112000	115000	115000

	Վեդի	98500	100000	100000
	Արարատ	74500	75300	75300
Արմավիր	Վաղարշապատ	153200	154150	154150
	Արմավիր	119200	121200	121200
	Մեծամոր	86500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99000	99150	99150
	Գավառ	57500	59800	59800
	Մարտունի	107400	107600	107600
	Վարդենիս	41500	44800	44800
	Ճամբարակ	25950	28700	28700
Լոռի	Վանաձոր	87200	88400	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	53200	55000	55000
	Տաշիր	43900	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	19800	20200	20200
Կոտայք	Աբովյան	153200	155100	155100
	Նոր Հաճն	128500	128600	128600
	Բյուրեղավան	107100	108150	108150
	Եղվարդ	109300	109300	109300
	Հրազդան	61800	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	84000	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109300	109300
	Արթիկ	65200	66500	66500
	Մարալիկ	39500	40700	40700
Սյունիք	Գորիս	116800	121800	121800
	Կապան	90200	92250	92250
	Սիսիան	88500	91150	91150
	Մեղրի	75000	80800	80800
	Ագարակ	44200	46850	46850
	Քաջարան	94300	94650	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	91400	95000	95000
	Եղեգնաձոր	118700	124850	124850
	Ջերմուկ	109200	112500	112500
Տավուշ	Դիլիջան	108700	113150	113150
	Իջևան	116000	118300	118300
	Բերդ	57200	60200	60200
	Նոյեմբերյան	45700	49900	49900
	Այրում	28000	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2013թ. նոյեմբերի համեմատ աճել են 0.06%-ով:

2013թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 530 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 158, մարզերում միասին վերցրած՝ 372: 2013թ. դեկտեմբերին, 2013թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 15.7%-ով, ընդ որում Երևանում՝ 35.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 9.1%-ով: 2012թ. դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 3.6%-ով, ընդ որում Երևանում՝ 1.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 4.6%-ով:

2013թ. դեկտեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները/դրամ/		
	դեկտեմբեր 2012թ	դեկտեմբեր 2013թ.	նոյեմբեր 2013թ.
Կենտրոն	470700	476100	476100
Արաբկիր	377400	383000	383000
Քանաքեռ Զեյթուն	290000	295000	295000
Նորք Մարաշ	313700	319200	319200
Ավան	266800	270500	270500
Էրեբունի	234400	239500	239500
Շենգավիթ	250600	255000	255000
Դավթաշեն	271100	276000	276000
Աջափնյակ	243800	250050	250050
Մալաթիա Սեբաստիա	234300	238000	238000
Նուբարաշեն	147300	150500	150500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. դեկտեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. նոյեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

2013թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		դեկտեմբեր 2012թ	դեկտեմբեր 2013թ.	նոյեմբեր 2013թ.
Արագածոտն	Աշտարակ	135000	136200	136200
	Ապարան	57900	60050	60050
	Թալին	68650	69250	69250
Արարատ	Արտաշատ	98800	100000	100000
	Մասիս	113800	115100	115100
	Վեդի	101000	102300	102300
	Արարատ	87500	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	152300	153100	153100
	Արմավիր	106500	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94200	94800	94800
	Գավառ	55700	57100	57100
	Մարտունի	94500	96100	96100
	Վարդենիս	38000	41000	41000
	Ճամբարակ	28950	31100	31100
Լոռի	Վանաձոր	98500	100000	100000
	Ստեփանավան	88200	90000	90000
	Սպիտակ	113600	114000	114000
	Ալավերդի	48200	50200	50200
	Տաշիր	51500	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000

	Շամլուղ	13200	14000	14000
	Ախթալա	29600	30000	30000
Կոտայք	Աբովյան	154700	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120000	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	81600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	82500	83000	83000
	Գյումրի	117800	118500	118500
Շիրակ	Արթիկ	62900	63100	63100
	Մարալիկ	51150	52000	52000
	Գորիս	128400	130000	130000
Սյունիք	Կապան	98500	100000	100000
	Սիսիան	92500	96500	96500
	Մեղրի	81800	84500	84500
	Ագարակ	46700	46900	46900
	Դաստակերտ	11610	11610	11610
	Վայք	88000	90050	90050
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	116000	116600	116600
	Ջերմուկ	127000	131300	131300
	Դիլիջան	110500	113000	113000
Տավուշ	Իջևան	122000	123200	123200
	Բերդ	59000	60100	60100
	Նոյեմբերյան	46100	48300	48300
	Այրում	34600	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2013թ. դեկտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2013թ. նոյեմբերի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2013թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարվել են 1591 միավոր /653.93 հա/ հողեր, որից Երևանում՝ 168 միավոր /8.56 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 914 միավոր /591.12 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /1.19 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 461 միավոր /40.41 հա/, որից Երևանում՝ 86 միավոր /2.20 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 164 միավոր /10.99 հա/, որից Երևանում՝ 63 միավոր /4.19 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 25 միավոր /3.61 հա/, որից Երևանում՝ 13 միավոր /0.98 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 13 միավոր /6.44 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 13 միավոր /0.72 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր /0.64 հա/ ընդհանուր մակերեսով:

2013թ. դեկտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1337 միավորի /569.79 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 141 միավոր /6.59 հա/, նվիրատվության գործարքներ՝ 240 միավորի /81.71 հա/, որից Երևանում՝ 25 միավոր /1.85 հա/ և փոխանակության գործարքներ՝ 14 միավորի /2.43 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.13 հա/:

Հանրապետությունում 2013թ. դեկտեմբերին, 2012թ. դեկտեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.7%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 12.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 5.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 37.5%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Գեղարքունիքի մարզում՝ 101.18 հա, որից 94.73 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 20.9%-ը կամ 280 գործարքներ /96.61 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 80 միավոր /2.40 հա/, իսկ 78.4%-ը կամ 1048 միավորը /476.42 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 61 միավոր /4.20 հա/: 2013թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 9 գործարք /1.76 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2013թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող											
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր			
									Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	0	0.00	4	0.04	38	0.24	38	2.12	5	0.90	8	0.88	30	1.26	18	1.16				
Արագածոտն	5	4.82	2	1.86	4	0.11	4	0.39	70	42.65	0	0.00	29	3.05	3	0.74				
Արարատ	17	33.04	1	0.02	4	0.43	8	0.07	101	51.70	1	0.42	56	5.84	3	0.02				
Արմավիր	6	5.07	1	0.13	9	0.76	4	0.17	96	79.97	0	0.00	59	6.07	2	0.02				
Գեղարքունիք	3	17.31	0	0.00	12	1.07	8	0.44	216	77.42	0	0.00	21	2.97	1	0.02				
Լոռի	1	0.08	2	0.03	1	0.01	12	0.22	29	17.01	0	0.00	8	0.63	2	0.05				
Կոտայք	6	5.69	0	0.00	12	0.64	7	0.02	93	85.14	1	0.02	34	2.76	9	0.63				
Շիրակ	2	4.86	0	0.00	9	0.22	2	0.03	34	38.23	0	0.00	13	1.03	1	0.02				
Սյունիք	3	0.60	0	0.00	7	0.31	4	0.09	28	30.13	2	0.06	5	0.41	0	0.00				
Վայոց Ձոր	1	0.45	0	0.00	0	0.00	1	0.03	20	6.48	0	0.00	4	0.29	1	0.002				
Տավուշ	7	5.97	0	0.00	8	0.75	10	0.69	22	13.27	0	0.00	14	2.13	3	0.22				
Ընդամենը	51	77.89	10	2.08	104	4.54	98	4.27	714	442.90	12	1.38	273	26.44	43	2.88				

Ստորև ներկայացվում է 2013թ. դեկտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն ար օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	61	1.06	4	0.04	38	0.24	19	0.78	19	1.33	0	0.00	0	0.00	0	0.00	19	1.33
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	7.18	5	4.82	2	1.86	4	0.11	4	0.39
Արարատ	2	0.022	1	0.02	0	0.00	1	0.002	26	32.64	15	32.14	0	0.00	4	0.43	7	0.07
Արմավիր	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	19	6.12	6	5.07	1	0.13	9	0.76	3	0.16
Գեղարքունիք	1	0.11	0	0.00	1	0.11	0	0.00	22	18.71	3	17.31	0	0.00	11	0.96	8	0.44
Լոռի	4	0.05	0	0.00	1	0.01	3	0.04	11	0.21	0	0.00	2	0.03	0	0.00	9	0.18
Կոտայք	1	0.10	0	0.00	1	0.10	0	0.00	24	6.25	6	5.69	0	0.00	11	0.54	7	0.02
Շիրակ	2	0.04	0	0.00	2	0.04	0	0.00	10	3.02	1	2.81	0	0.00	7	0.18	2	0.03
Սյունիք	4	0.20	0	0.00	4	0.20	0	0.00	10	0.81	3	0.60	0	0.00	3	0.12	4	0.09
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.48	1	0.45	0	0.00	0	0.00	1	0.03
Տավուշ	3	0.49	0	0.00	0	0.00	3	0.49	22	6.92	7	5.97	0	0.00	8	0.75	7	0.20
Ընդամենը	79	2.08	5	0.06	47	0.70	27	1.32	180	83.67	47	74.86	5	2.02	57	3.85	71	2.94

2013թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք /3.02 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2013թ. դեկտեմբերին, 2012թ. դեկտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 19.3%-ով: Ընդ որում, Երևանում՝ աճել է 90.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 24.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 42.7%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 14.9%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 4.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ նվազել է 16.7%-ով :

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. դեկտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (տախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	0.56	179.9	821.7	500.8	49	19.47	365.0	12000.0	3525.4
Ապարան						7	7.12	86.5	2727.3	715.0
Թալին	2	3.96	38.2	169.1	103.7	8	6.27	93.6	5494.5	700.0
Ծաղկահովիտ	1	0.30	2220.0	2220.0	2220.0	1	1.39	79.5	1000.0	294.5
Արարատի մարզ										
Արտաշատ						54	20.15	335.1	10833.3	2660.5
Մասիս	3	1.12	4140.3	4161.1	4152.1	10	17.45	200.0	11904.8	3010.0
Վեդի	12	31.02	59.6	747.6	237.5	35	13.44	207.0	10795.1	1847.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	2	3.28	521.3	521.7	521.5	46	37.03	294.3	9090.0	1247.1
Բաղրամյան	2	1.03	67.5	67.5	67.5	23	26.82	90.6	2561.1	780.0
Վաղարշապատ	2	0.76	60.8	60.8	60.8	23	10.68	444.4	11764.7	2210.0

Գեղարքունիքի մարզ										
Գավառ						169	58.70	199.8	1875.0	430.0
Ճամբարակ								60.5	953.3	355.2
Մարտունի	1	0.05	668.0	668.0	668.0	31	4.39	51.1	2850.0	747.5
Սևան						5	2.71	52.2	2134.8	325.5
Վարդենիս	2	17.26	678.7	678.7	678.7	6	10.25	41.2	2575.1	415.5
Լոռու մարզ										
Ալավերդի						9	4.51	170.4	6424.2	567.5
Գուգարք						1	0.67	234.6	6065.9	785.3
Սպիտակ								250.0	5555.5	730.8
Ստեփանավան						2	2.87	90.6	1686.6	340.0
Տաշիր						14	5.96	45.3	1384.4	168.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	2.99	166.7	2326.6	843.6	24	17.55	279.3	11942.7	4065.5
Եղվարդ	1	1.00	622.1	622.1	622.1	28	53.31	174.4	11971.8	2433.6
Հրազդան	1	1.70	212.9	212.9	212.9	41	14.29	130.5	10256.4	1464.3
Շիրակի մարզ										
Ախուրյան						16	13.91	252.0	1693.1	628.7
Ամասիա	1	2.81	154.0	154.0	154.0	1	5.75	40.9	261.0	126.8
Անի						11	14.30	110.6	546.9	403.2
Աշոցք								58.5	215.8	130.0
Արթիկ						6	4.27	79.4	1428.6	435.5
Սյունիքի մարզ										
Գորիս	2	0.58	500.0	500.0	500.0	1	0.07	92.6	1023.2	738.0
Կապան						4	2.07	120.0	841.6	373.5
Մեղրի	1	0.02	41000.0	41000.0	41000.0	6	0.39	193.0	3000.0	740.0
Սիսիան						17	27.60	46.3	1977.4	550.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.45	88.9	88.9	88.9	3	1.01	125.0	10000.0	1940.0
Վայք						17	5.47	58.8	1430.7	642.5
Տավուշի մարզ										
Բերդ						4	0.86	213.3	3783.8	690.0
Իջևան	5	4.12	155.7	4583.3	1938.6	8	8.55	267.5	9454.5	1250.0
Նոյեմբերյան	2	1.85	219.3	1320.0	769.6	10	3.86	46.7	7368.4	912.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2013թ. դեկտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	73.0	3750.0	4000.0	3833.3	24	25170.3	130.7	22200.0	2582.3
Ապարան						3	3483.0	124.1	609.6	390.0
Թային	1	1000.0	75.6	75.6	75.6	2	1860.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	92.0
Արարատի մարզ										
Արտաշատ	4	4322.5	268.1	838.6	411.1	17	17594.0	173.9	7140.3	899.0
Մասիս						22	14453.2	187.5	25000.0	1205.9
Վեդի						17	26392.8	126.1	5000.0	661.0

Արմավիրի մարզ										
Արմավիր						22	28201.0	131.6	9090.9	1214.0
Բարդամյան						2	2300.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	9	7626.3	554.5	555.9	555.2	33	27776.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	5719.0	186.6	1084.3	683.3
Ճամբարակ								71.3	2286.2	148.1
Մարտունի	8	7247.0	119.0	330.0	231.8	13	19387.0	119.3	5000.0	281.4
Սևան	3	2362.0	127.8	255.8	170.5			240.0	3110.4	320.0
Վարդենիս								72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Ալավերդի						1	28.0	114.3	1388.9	217.0
Գուգարք						3	2542.0	77.9	14083.3	1260.0
Սպիտակ						4	3759.3	104.9	1348.3	206.5
Ստեփանավան								88.2	1666.7	175.5
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	8	4035.7	285.0	2375.3	1388.7	10	7953.6	264.5	35353.5	1990.0
Եղվարդ	2	838.5	3459.5	5062.5	4261.0	20	14393.0	173.6	27000.0	2860.8
Հրազդան	1	490.0	4750.2	4750.2	4750.2	3	4450.0	117.7	34848.5	1317.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	778.5	1636.1	4182.6	2447.0	8	5473.8	113.6	18750.0	334.5
Ամասիա	2	629.0	165.2	165.4	165.3			45.3	274.7	71.0
Անի	1	400.0	349.3	349.3	349.3	2	2360.0	67.9	180.6	180.0
Աշոցք								40.8	144.0	64.0
Արթիկ						2	2490.0	111.8	5000.0	217.7
Սյունիքի մարզ										
Գորիս	1	902.0	425.3	425.3	425.3	2	2640.0	112.2	1700.0	365.0
Կապան	2	270.8	244.2	1890.6	1067.0			67.9	2638.9	307.5
Մեղրի						2	920.0	68.5	632.9	220.0
Սիսիան						1	550.0	123.5	875.0	218.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	1520.0	96.7	7659.6	506.5
Վայք						1	1365.0	120.7	1448.3	228.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	595.0	75.8	810.0	121.5
Իջևան	4	3131.4	151.3	3000.0	1641.7	13	20671.6	74.1	14423.1	510.0
Նոյեմբերյան	4	4373.0	176.0	289.3	228.8			125.0	1948.1	230.0

2013թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 838 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 67.7%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2013թ. դեկտեմբերին, 2013թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 17.0%-ով, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ՝ 5.0%-ով:

2013թ. դեկտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 49 բնակարանների, 97 անհատական բնակելի տների, 377 հասարակական, 93 արտադրական նշանակության օբյեկտների, 209 հողերի, 1 այգետնակի և 12 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2013թ. դեկտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 20 վարձակալության գործարքների, այդ թվում 6 միավոր /0.19 հա/ կառուցապատման իրավունքով, որոնց քանակը 2013թ. նոյեմբերի համեմատ աճել է 2.2 անգամ, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ՝ 33.3%-ով: 2013թ. դեկտեմբերին հանրապետությունում վարձակալված 524.93 հա հողերից 3.61 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 521.32 հա հողերից 503.41 հա կազմում են գյուղատնտեսական

նշանակության, 7.56 հա արդյունաբերական օբյեկտների, 0.02 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Կոտայքի մարզում՝ 209.30 հա, որից 209.12 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. դեկտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2841 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15.5%ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. նոյեմբերի համեմատ աճել է 30.0%-ով, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ՝ 17.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.9%/, առանձնատների /27.4%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.0%/ և հողերի /6.5%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1494 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2013թ. նոյեմբերի համեմատ աճել է 31.5%-ով, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ՝ 14.3%-ով:

2013թ. դեկտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 812.46 հա հողեր, որից 25.59 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 95.2%-ը կամ 773.48 հա գյուղատնտեսական նշանակության են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 451.02 հա, որից 449.61 հա գյուղատնտեսական նշանակության:

2013թ. դեկտեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 190 գործարքներ: 2013թ. դեկտեմբերին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2013թ. նոյեմբերի համեմատ աճել է 7.3%-ով, իսկ 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել՝ 8.2%-ով:

Երևանում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 122 գործարքներ, որը 2013թ. նոյեմբերի համեմատ աճել է 7.0%-ով, իսկ 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել՝ 13.5%-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը 2013թ. նոյեմբերի համեմատ աճել է 7.9%-ով, իսկ 2012թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ 3.0%-ով:

2013թ. դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2212 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2013թ. նոյեմբերի համեմատ աճել է 25.9%-ով, իսկ 2012թ. դեկտեմբերի համեմատ նվազել՝ 24.2%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.1%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /31.1%/:

« Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե